Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի ս. Մինասին վճարել հետզհետէ երեք հազար ռուբլի Յոբելենական Յանձնաժողովի անդամ Տ. Մուշէ վարդապետին՝ տնտեսական ենթամանաժողովի նախագահին, և տալ մի ժապաւինեալ մատեան հաշիւները պահելու և յոբելենական հանդէսներից յետոյ ներկայացնելու Մինասին ի գննութիւն։ 3 հոկտեմբերի, թ. 1521։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Տաճարի լուսաբարապետ Տ. Ղևոնդ եպիսկոպոսին ուղարկել Երևանի փոխ-թեմական միջոցով Հին-Նախիջևանի վիճակի Այարդիւղի եկեղեցուն մի ձեռք հին եկեղեցական զգեստ։ 3 հոկտեմբերի, թ. 1523։

Կոնդակ Տաթևի շրջանի Տուլորս գիւղի եկեղեցական-ծխական հոգաբարձութեան անունով, որով օրհնելով հոգաբարձութեան և ժողովրդին՝ թոյլատրուեց բանալ յիշեալ գիւղի եկեղեցու զաւթում ծխական դպրոց։ 4 հոկտեմբ., թ. 1532։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ.

Կոնդակ գոհունակութեան և օրհնութեան Նոր-Բայազէտցի Հայրապետ Խաչատրեանի անունով՝ իւր ծախքով Հայոց եկեղեցական-ծխական դպրոցի համար սեպհական շէնք կառուցանելու առթիւ։ 3 օգոստ., թ. 1140։

Կոնդակ գոհունակութեան և օրհնութեան երդուեալ հաւատարմատար պ. Գրիգոր Խաչերեսեան Զալխուշեանի անունով՝ Նոր Նախիջևանի դպրոցական ֆոնդի օգտին հանգանակութեան գործին սրտագին օգնութիւն ցոյց տալու առթիւ. 9 օգոստոսի, թ. 1141։

Կոնդակ գոհունակութեան և օրհնութեան Տաճկահայ գործիչ Յակոբ Գուրգէնի անունով՝ Նորա քառասնամեայ գրական գործունէութեան յոբելեանը կատարելու առթիւ*։ 25 օգոստոսի, թ. 1232։

---

* Իւր կողմից ուղարկելով և մի հարիւր ռուբլի նպաստ։